ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/13» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ (ԷԱՃ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

01.02.2019թ.
ժամը 16^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետի ՊԺԿ Ա. Նազարյանը,
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյանը,
ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի սպա բ/ծ մայոր Մ. Գալստյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀՇ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումն[illegible] փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 1-ին դասի առաջատար ծառայող Մ. Հոխեյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/13» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Մ. Հոխեյան)

1.1 ***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ն և «Վլադ-ֆարմ» ՍՊԸ-ն /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/, «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ն և «Արմֆարմ» ՍՊԸ-ն /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/ և «ՖԱՐՄԵԳՈՒՍ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետ[illegible] բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չ[illegible] իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներն» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:***

1.2 Առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/13» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝
- «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի և «Վլադ-ֆարմ» ՍՊԸ-ի /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/ կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը (Հավելված 2) չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/13» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին, «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի և «Վլադ-ֆարմ» ՍՊԸ-ի /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/ կողմից ներկայացված հավելված 3-ով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրեր սյունակում առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/13» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող (լայնությունը, երկարությունը) +/- նշանների փոխարեն նշված է այլ նշան (՞ հարցական նշան), «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի և «Վլադ-ֆարմ» ՍՊԸ-ի /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/ կողմից ներկայա[illegible]

որակավորման փաստաթղթերում բացակայում է համատեղ գործունեության պայմանագիրը (կոնսորցիում), ընթացակարգի հրավերի 3-րդ կետի համաձայն, համատեղ գործունեության պայմանագիրը առկայության դեպքում մասնակիցը հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությանը կից ներկայացնում է համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի և «Վլադ-ֆարմ» ՍՊԸ-ի /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/ կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում բացակայում են, որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստող նմանատիպ պայմանագիրը (պայմանագրերը), կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

«ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի և «Արմֆարմ» ՍՊԸ-ի /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/ կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում բացակայում են, որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստող նմանատիպ պայմանագիրը (պայմանագրերը), կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

- «ՖԱՐՄԵԳՈՒՍ» ՍՊԸ կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը (Հավելված 2) չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/13» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին, «ՖԱՐՄԵԳՈՒՍ» ՍՊԸ կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում (Հավելված 3) անհրաժեշտ է ներառել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/13» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի մաս կազմող տեղեկատվությունը՝ մասնավորապես՝ մատակարարման ժամանակ ներկայացնել արտադրողի (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը, թիվ 1,2 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ, «ՖԱՐՄԵԳՈՒՍ» ՍՊԸ կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում բացակայում են, որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստող նմանատիպ պայմանագիրը (պայմանագրերը), կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և ծանուցել մասնակիցներին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Վերոնշյալ մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունները: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի և «Վլադ-ֆարմ» ՍՊԸ-ի /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/, «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի և «Արմֆարմ» ՍՊԸ-ի /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/ և «ՖԱՐՄԵԳՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից **Eauction** համակարգի միջոցով ներկայացված՝ հրավերով պահանջվող որակավորման փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/13» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան:

1.3 01.02.2019թ. հիմք ընդունելով էլեկտրոնային գնահատման արդյունքները և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի և «Վլադ-ֆարմ» ՍՊԸ-ի /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/, «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի և «Արմֆարմ» ՍՊԸ-ի /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/ և «ՖԱՐՄԵԳՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը և հրավերով նախատեսված մնացած փաստաթղթերը գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/13» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ որ ճանաչվել էին 1-ին տեղեր զբաղեցնող մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Հանձնաժողովը 2-րդ չափաբաժնի մասով /Թանգիվ բժշկական/ ընթացակարգը հայտարարել էր չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

1.4 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/13» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Հոխեյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/13» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Նազարյան
Գնահատող	Վ. Վահանյան
Գնահատող	Մ. Գալստյան
Գնահատող	Հ. Ավետիսյան
Գնումները համակարգող	Մ. Հոխեյան